

ОБРАЗОВАНИЕ

**Բարձրագույն կրթական համակարգի պետական կարգավորումը
Հայաստանի Հանրապետությունում**

Գրիգորյան Հարություն Ա.

ՀՊՏՀ մարքեթինգային հաղորդակցությունների ֆակուլտետի մագիստրանտ (Երևան, ՀՀ)
harutyun.grigoryan99@gmail.com

ՀՏԳ՝ 81`25: EDN: ZSGODH; DOI: 10.58587/18292437-2023.1-125

Հանգուցաբառեր՝ կրթություն, բարձրագույն կրթություն, պետական քաղաքականություն, կրթական բարեփոխումներ, պետության գործառույթ, կրթական ծառայություններ, կրթական չափորոշիչներ, համալսարան, պետական կառավարում, տեղեկատվա-հեռահաղորդակցական տեխնոլոգիաներ:

Государственное регулирование системы высшего образования в Республике Армения

Григорян Арутюн А.

Магистрант факультета маркетинговых коммуникаций АГЭУ (Ереван, РА)
harutyun.grigoryan99@gmail.com

Аннотация. В статье рассматриваются вопросы государственного регулирования системы высшего образования, объективная необходимость которого для жизнедеятельности населения в Республике Армении. Государства в целом определяет его всеобщий, публичный характер при всех общественно-экономических формациях. Именно поэтому государство не может находиться в стороне от развития высшего образования и рассматривает систему высшего образования как приоритетный объект государственного управления, увязывая при этом интересы и населения, и экономики государства целом, принимая законы и иные нормативные правовые акты в области образовательной деятельности государства, связанной с различными ее направлениями.

Ключевые слова: образование, высшее образование, государственная политика, образовательные реформы, функция государства, образовательные услуги, образовательные стандарты, университет, государственное управление, информационные и телекоммуникационные технологии.

State Regulation of the Higher Education System in the Republic of Armenia

Grigoryan Harutyun A.

Master's student of the Faculty of Marketing Communications ASU E (Yerevan, RA)
harutyun.grigoryan99@gmail.com

Abstract. The questions of state regulation of higher education system, which is an objective necessity for the life of the population Republic of Armenia. And the state as a whole determines its universal, public, nature in all socioeconomic formations. That is why the state cannot be detached from the development of education and examines education, including higher education, a priority object of government, while linking the interests of both citizens and the state's economy overall, by adopting laws and other regulations in the field education state activities related to its various destinations.

Keywords: education, higher education, state policy, educational reforms, function of the state, educational services, educational standards, university, public administration, information and telecommunication technologies.

ՀՀ սահմանադրությունում նշված է. «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»: Ժամանակակից հասարակության հիմնարար արժեքներից է կրթությունը՝ մարդու հիմնարար իրավունքը, հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման գրավականը: Որակյալ կրթությունը յուրաքանչյուր պետության առաջնահերթությունն է: Ըստ «Կրթության մասին» ՀՀ օրենքի Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը պետական կրթական չափորոշիչների, պետական հավատարմագրման չափանիշների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, ուսում-

նական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջություն է:

ՀՀ կրթական համակարգը ներառում է տարբեր աստիճանների կրթական ծառայություններ մատուցող հաստատությունները, կրթության կառավարման պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ֆորմալ և ոչ ֆորմալ կրթություն իրականացնող սուբյեկտները, ոլորտի շահառուները, ոլորտում աշխատող բազմահազար անձնակազմը, կրթական ծրագրերը և ոլորտը կարգավորող օրենսդրությունը:

Առկա են **կրթության մատչելիության, որակի և արդյունավետության** հետ կապված բազմապիսի խնդիրներ, որոնք արմատական լուծումներ են պահանջում: Այդ խնդիրներն այս կամ այն սրությամբ առկա են ֆորմալ կրթության բոլոր մակարդակներում, ինչպես նաև արտադպրոցական, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտներում:

Կրթության բնագավառում կառավարությունը իրավասու է ապահովել պետական կրթական քաղաքականության իրականացումը, հաստատել պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը, հաստատել ուսուցանվող մասնագիտությունների ցանկը, հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթության պետական պատվերը, ինչպես նաև հաստատում է պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները և պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը:

Կրթական համակարգ հասկացությունը, որպես պետական կարգավորման օբյեկտ, ներառում է փոխկապակցված և փոխազդող տարրերի մի ամբողջություն, այդ թվում.

- տարբեր մակարդակների և ուղղությունների կրթական ծրագրեր և պետական կրթական չափորոշիչներ,

- կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ցանց՝ անկախ դրանց կազմակերպարավական ձևերից ու տեսակներից,

- կրթական մարմինները և նրանց ենթակա հիմնարկներն ու կազմակերպությունները [10, էջեր 67-74]:

Կրթության ոլորտում պետական քաղաքականությունը պետության ուղղորդող և կարգավորող գործունեությունն է, որն իրականացվում է պետության ռազմավարական նպատակներին և խնդիրներին հասնելու համար [11, էջեր 29-39]:

Կրթության ոլորտի պետական կարգավորումը կրթական գործընթացների վրա տնտեսական, սոցիալական, իրավական, քաղաքական և կազմակերպչական ձևերի և մեթոդների ազդեցության համակարգ է, որոնք ստեղծում են պայմաններ այդ նպատակների և խնդիրների իրականացման համար: Միաժամանակ պետությունը պետք է ազդի թե՛ կրթության պահանջարկի, թե՛ առաջարկի վրա:

Կրթական համակարգի զարգացման ներկա փուլում կարևոր է միավորել պետության և հասարակության ջանքերը կրթության խնդիրների լուծման համար, ներգրավելով ուսուցիչների, դասախոսների և հանրության անդամների՝ ի դեմս ծնողների, հնարավորություն տալով համատեղ ընտրել կրթության բովանդակությունը,

ձևերը և մեթոդները, կրթական համակարգի հանրային կառավարման հայեցակարգի իրականացման շրջանակներում պայմաններ ստեղծել սովորողների համակողմանի զարգացման համար:

Տվյալ հայեցակարգի ներդրման փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տվել բացահայտել պետական կառավարման փոփոխական ձևերը, որոնք սահմանում են.

- ուսումնական հաստատության բացահայտված հնարավորությունները և ռեսուրսների պակասը,

- կրթության կառավարմանը հանրության մասնակցության հնարավոր ձևերը,

- ուսումնական հաստատությունում պետական կառավարման կոնկրետ մոդելի ներդրման պայմանները [7, էջեր 314-316]:

Կրթության կառավարումը ենթադրում է պետական կառավարման որոշակի մոդելի կառուցում, որը բաղկացած է չորս փոխկապակցված բաղադրիչներից.

1. նպատակալացություն,

2. կազմակերպվածություն,

3. ընթացակարգություն,

4. արդյունավետություն [10, էջեր 67-74]:

Է. Կովալևը հիմնվելով Գերմանիայի փորձի ուսումնասիրության վրա, առանձնացրե է երեք մոդել.

- պետական վերահսկողության մոդել (government control), որը բնութագրվում է ուժեղ պետական մարմինների իշխանությամբ և միևնույն ժամանակ բուհերի ներսում ակադեմիական վերնախավի մեծ ազդեցությամբ.

- պետական հսկողության մոդել (government supervision), որը նախատեսում է պետության ավելի քիչ լիազորություններ, համալսարաններում ակադեմիական հանրության և համալսարանի ղեկավարության ազդեցության մեծացում,

- «գնահատող պետության» մոդելը, որում պետության ազդեցությունն իրականացվում է ոչ թե կարգավորման, այլ կրթական կազմակերպությունների գնահատման միջոցով [9, էջեր 56-61]:

Կրթության կառավարումն Իսպանիայում, ի տարբերություն Գերմանիայի, իրականացվում է պետական կառավարման մարմինների, ինքնավար համայնքների և տեղական կրթական իշխանությունների միջև [6, էջեր 3-7]:

Համաձայնելով Վ. Չասեպկինայի կարծիքի հետ՝ պետք է առանձնացնել կրթական համակարգի կառավարման երկու մակարդակ.

- **մակրո մակարդակ** – կրթական համակարգի կառավարում հիմնական տարրերի միասնության մեջ, տարբեր մակարդակների և ուղղությունների կրթական ծրագրեր և չափորոշիչներ, ծրագրերն իրականացնող ուսումնական

հաստատությունների ցանց՝ անկախ դրանց կազմակերպարավական ձևերից ու տեսակներից, կրթության կառավարման մարմիններ և նրանց ենթակա հիմնարկներ և կազմակերպություններ, կրթության ոլորտում գործունեության իրականացնող իրավաբանական անձանց, հասարակական և պետական մարմինների միավորում:

- **միկրո մակարդակ** – կրթական հաստատության ներսում կառավարման համակարգ, որը կարգավորվում է ինչպես «արտաքին» իրավական ակտերով, ինչպիսիք են օրենքները, հրամանագրերը, այնպես էլ ներքին՝ ղեկավարի հրամաններով, ցուցումներով [8, էջեր 82-91]:

Հարկ է նշել, որ այս երկու մակարդակները փոխկապակցված են, ուստի կրթական հաստատությունները չեն կարող ընդունել այնպիսի իրավական-նորմատիվ ակտ, որը հակասում է պետության օրենսդրական դաշտին:

Մյուս կողմից, կրթական կազմակերպությունները կարող են դառնալ օրենսդրական նախաձեռնողներ և համապատասխան փոփոխություններ կատարել գործող նորմատիվ դաշտում:

Կրթության ոլորտի վրա պետության ազդեցության երկրորդ մեխանիզմը կրթության պետական կարգավորումն է: Միաժամանակ պետք է տարբերակել կրթական գործունեության «կարգավորում» և «կանոնակարգ» հասկացությունները:

Եթե կարգավորումը (անգլ. state regulation) նպատակաուղղված ազդեցություն է հասարակության որոշակի հատվածի վրա, ապա կանոնակարգումը (ֆրանս. reglement) որոշակի գործընթացի իրավական կարգավորումը կազմակերպելու միջոց: Այսպիսով, կրթական գործունեության կարգավորումը կրթական գործընթացի իրավական կարգավորման միջոց է:

Կրթության պետական կարգավորման հիմնական ուղղություններն են կրթական գործունեության լիցենզավորումը և պետական հավատարմագրումը:

Կրթական գործունեության կարգավորումը կրթական համակարգի վրա նպատակաուղղված ազդեցություն է՝ նրա արդյունավետ գործունեության նպատակով:

Կրթական համակարգի որակը երկրի զարգացման առանցքային գործոն է: Կրթական ծառայությունների ոլորտը պետք է կարգավորվի, քանի որ բարձր որակավորում ունեցող մասնագետի հիմնական պատվիրատուն պետությունն է [7, էջեր 314-316]:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները ամրագրված են «Կրթության մասին» օրենքում: Դրանք են.

• կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու

առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը,

• կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ,

• կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը,

• միջազգային կրթական համակարգում ինտեգրացումը,

• սփյուռքում հայապահպան կրթական գործունեությանն աջակցելը,

• ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը,

• ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը,

• պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում քաղաքացիների կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը,

• ուսումնական հաստատությունների ու դրանց կողմից տրվող ավարտական փաստաթղթերի իրավահավասար կարգավիճակի ապահովումը:

Բարձրագույն կրթության համակարգը պետական կառավարման գերակա օբյեկտ է, որն ընդգրկում է բնակչության, տնտեսության, պետության շահերը: Պետությունը ընդունում է կրթական ոլորտի տարբեր ուղղություններում օրենքներ և նորմատիվային իրավական ակտեր: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն ամրագրված են «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքում.

• մարդու և քաղաքացու՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի ապահովումը և պաշտպանությունը.

• բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մատչելիությունը.

• կրթական գործընթացի անընդհատությունը, հաջորդայնությունը և շարունակականությունը.

• մրցութայնությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը.

• եվրոպական և օտարերկրյա այլ պետություններում Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական կրթության որա-

կավորման աստիճանների համեմատելիությունը և դիպլոմների ճանաչելիության ապահովումը.

- ուսանողների միջազգային շարժունությանը նպաստելը.

- բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական ազատությունները և ինքնավարությունը խթանելն ու զարգացնելը.

- հայազգի օտարերկրյա քաղաքացիների (սփյուռքի համար), ինչպես նաև հայագիտության զարգացման նպատակով մասնագիտական պատրաստումը և որակավորման բարձրացումը [2]:

Տեղեկատվական դարաշրջանում կրթության ոլորտում կատարվող արմատական փոփոխությունները սերտորեն կապված են, ինչպես տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման, այնպես էլ տարածման հետ, քանի որ հենց նոր տեխնոլոգիաների ներդրամբ է տեղի ունենում կրթության համակարգի արդիականացում, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացում: Ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում մեծ ուշադրություն է դարձվում կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման և արդյունավետ կիրառման, ինչպես նաև կրթության տեղեկատվայնացման խնդիրներին:

Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումն ու արդյունավետ կիրառումն ուղղակիորեն կախված են պետական աջակցությունից: Պետական քաղաքականությունն այս ոլորտում պահանջում է անհրաժեշտ օրենսդրանորմատիվային դաշտի ձևավորում և դրա հետևողական կիրառում: ՀՀ-ում կրթության ոլորտը կարգավորող օրենսդրաիրավական դաշտը ձևավորվում է սահմանադրության, նախագահի հրամանագրերի, ոլորտը կարգավորող օրենքների, որոշումների, հրամանների և այլնի հիման վրա: Այս առումով, առանցքային դերակատարություն ունի «Կրթության մասին» ՀՀ օրենքը, որտեղ ներկայացված են կրթության բնագավառի պետական քաղաքականության ընդհանուր դրույթները՝ նպատակներ, սկզբունքներ, կրթական իրավունքի պետական երաշխիքներ, կրթական համակարգ և դրա կառավարում և այլն:

Այդ գործընթացների ամբողջությունը և նպատակներն իրագործելու համար ՀՀ կառավարությունն ունի մի շարք իրավասություններ [3].

- ապահովում է պետական կրթական քաղաքականության իրականացումը,

- հաստատում է պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը,

- սահմանում է որակավորումների ազգային շրջանակը և հաստատում է կրթության որակավորման աստիճանների ընդհանրական բնութագրերը,

- հաստատում է ուսուցանվող մասնագիտությունների ցանկը,

- հաստատում է հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթության պետական պատվերը,

- հաստատում է պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները,

- հաստատում է պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը. 1. սահմանում է լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը. 2. սահմանում է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը,

- իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

ՀՀ-ում սկսած 2000 թ. ՏՏ ոլորտի պետական կարգավորումը, ՀՀ կառավարության կողմից ճանաչվել է տնտեսության զարգացման գերակա ճյուղեր:

Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ու կրթության տեղեկատվայնացման գործընթացի հաջողության կարևոր նախապայմաններից է օրենսդրաիրավական դաշտի առկայությունը, որը մի կողմից՝ նպաստում է կրթության ոլորտի տեղեկատվայնացման արդյունավետ գործընթացին, ապահովում կրթության մատչելիությունն ու հասանելիությունը հասարակության բոլոր շերտերի համար, իսկ մյուս կողմից՝ նպաստի հասարակական կյանքում տեղեկատվության, գիտելիքի և տեղեկատվական տեխնոլոգիաների դերի մեծացմանն ու արդյունավետ օգտագործմանը: Արդյունքում կձևավորվեն «**տեղեկատվական հմտություններ**», որոնք հնարավորություն կտան սովորողներին յուրացնել մասնագիտական կրթական ծրագիրն ուսումնական գործունեության որոշակի համակարգով, որտեղ ուսուցիչը կամ դասախոսը հանդես կգան որպես ուղղորդող: Այս հմտությունները պահանջվում են, որպեսզի մարդը տեղեկատվական դարաշրջանում կարողանա որոնել, գտնել, մշակել անհրաժեշտ ու հավաստի տեղակատվություն, վերլուծել այն և, իհարկե, փոխանցել:

Պետության, հասարակության, քաղաքացիների համար անհրաժեշտ է, որ կրթությունն արդյունավետորեն կատարի իր ավանդական գործառնությունները՝

- սոցիալականացում,

- անձի ձևավորում,

- քաղաքացիական դաստիարակություն

[11, էջեր 29-39]:

Բարձրագույն կրթության համակարգը ներառում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, «Լիցենզավորման և հավատարմագրման ծառայությունը», «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը», «Կրթության ազգային ինստիտուտը», «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը», «Գիտության պետական կոմիտեն», «Բարձրագույն որակավորման կոմիտեն», «ՀՀ ԿԳՄՍ «Կրթական ծրագրերի կենտրոնը», «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը, պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները: Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին» ՀՀ օրենքով, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, նախագահի հրամանագրերով, ներպետական այլ նորմատիվ իրավական ակտերով և միջազգային փաստաթղթերով:

Ոլորտի հետագա զարգացման ապահովման, ինչպես նաև բարձրագույն կրթության գորբալ ոլորտում ընթացող վերափոխումներին և դրանցով առաջադրված նոր իրողություններին առավել հստակ համապատասխանության ապահովման նկատառումներից ելնելով Բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող հիմնական օրենքը ենթարկվել է հիմնարար փոփոխության և գտնվում է ՀՀ ազգային ժողովում: Նոր օրենքի նախագիծը հիմնովին վերափոխում է ինչպես բարձրագույն կրթական համակարգի պետական կարգավորման, այնպես էլ բուհերի ինքնակառավարման, կրթություն-գիտություն-տնտեսություն, կրթություն-շահակիցներ համագործակցության ներկայիս սկզբունքներն ու կառուցակարգերը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահել մասնագիտական կրթության զարգացման խնդիրները, որոնց լուծման տեսլականներն իբրև թիրախներ ներառվել են ինչպես Հայաստանի Հանրապետության զարգացման ռազմավարական ծրագրերում, այնպես էլ ՀՀ կառավարության տարբեր տարիների գործողությունների ծրագրում: Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ոլորտը ինչպես կառուցվածքային, այնպես էլ ընթացակարգային ու բովանդակային առումով զարգացման երկար ճանապարհ է անցել, ինչի արդյունքում որակական նոր, ավելի բարձր մակարդակի անցնելու բավարար հիմքեր են կուտակվել համակարգում: Սակայն որակական թռիչքի ու երկարաժամկետ զարգացման ապահովման

անհրաժեշտությունը պահանջում են էապես վերանայել բարձրագույն կրթության համակարգի ներկայիս ընկալումները ոլորտի ֆինանսավորման, կարգավորման, բուհական համագործակցության արմատավորված մոտեցումները, առանց որոնց համակարգի արդյունավետ զարգացումն անհնարին կլինի [5, էջ 11]:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացրել է «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, քանի որ «Կրթության մասին» ՀՀ օրենքի նշված կետի պահանջով, կրթության բանագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ ազգային ժողովը: Նախագծով նախատեսվում է ռազմավարական այնպիսի մոտեցումների որդեգրում, որոնք կապահովեն կրթության կայուն զարգացման առավել նպատակամղվածություն, որակ, արդյունավետություն: Կրթության առաջընթացն առավել նպատակային և արդյունավետ դարձնելու համար հետագա զարգացումները իրականացվելու են՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված գերակա ուղղությունների և զարգացման նպատակային ցուցանիշների համապատասխան, որոնք կնպաստեն Հայաստանի կրթական մրցունակության բարձրացմանը: Ծրագիրը, իրականացվելու է 2 փուլով՝ 2022-2026 թթ. և 2027-2030 թթ.: Վերջնական նպատակն է ձևավորել ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված, Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ, որը յուրաքանչյուրին, կյանքի բոլոր փուլերում, հնարավորություն է տալիս ստանալ իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն, ապահովում է շրջանավարտների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը և ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը:

Կրթության ոլորտում հիմնական գերակայությունը որակի բարձրացումն է, որը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ: Դրանցից առաջնահերթն ուսումնառության արդյունքներն են, որոնք պահանջված են սովորողների կողմից և ապահովվում են շրջանավարտների պատրաստվածությունը՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում, կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության:

Սահմանվում է նաև կրթության ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության ռազմավարական առաջնա-

հերթությունները՝ ներկայացնելով դրանց օրգանական կապը պետական և մասնավոր կարիքների, ինչպես նաև համաշխարհային զարգացման միտումների հետ: Հասարակական-քաղաքական իրավիճակը, որի պայմաններում մշակվել է ծրագիրը, էականորեն տարբերվում է մինչ այս գոյություն ունեցած իրավիճակներից: Մասնավորապես՝ ներկայում առկա է քաղաքական կամք և հստակ նպատակադրում՝ կառուցելու իրապես ինքնակառավարվող և ինքնակարգավորվող, կուսակցական ազդեցություններից ազատ, անկախ և նախաձեռնող, խնդիրներ սահմանող և դրանք լուծող, ներառող, ստեղծարար և արդյունավետ կրթական միջավայր՝ բոլորի համար: Տեսլականի հիմքում Հայաստանի վերափոխման ռազմավարությունն է, և հատկապես հիմնական նպատակն է՝ **գիտելիքի, մշակույթի, գիտակցության, հմտությունների համատարած, ներառական, նորարարական և հանրամատչելի զարգացման և յուրացման միջոցով ունենալ քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ քաղաքացի, ում համար իրավունքների իրացումը նույնքան կարևոր է, որքան պարտականությունների կատարումը, ով առաջին հերթին իրեն է համարում սեփական բարեկեցության և առողջության պատասխանատուն:**

Մինչև 2030 թվականը սահմանվում են հետևյալ ռազմավարական ուղղությունները.

1) **համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում**, որը յուրաքանչյուր քաղաքացու համար կյանքի բոլոր փուլերում հասանելի կդարձնի իր զարգացման և անձնային առանձնահատկություններից բխող որակյալ և արդյունավետ կրթական ծառայությունները ՀՀ ողջ տարածքում,

2) **կրթության արդյունավետության բարձրացում**, ինչը կապահովի ռեսուրսի (ներառյալ մարդկային) առավելագույն օպտիմալ և արդյունահենք տեղաբաշխում, համակարգի գործընթացային, ծախսային և կառավարման արդյունավետության բարձրացում,

3) **կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացում և արտահանում**, որը խարսխված է լինելու միջազգային կրթական տիրույթում և համակարգերում հայկական կրթական համակարգի ամբողջական և բովանդակային ինտեգրման, ինչպես նաև հայկական կրթական ծառայությունների և արտադրանքի արտահանման վրա՝ շահեկանորեն փոխակերպելով Հայաստանի դերը գլոբալ կրթական համակարգում [4, էջեր 3-5] :

Բոլոր ուսումնական հաստատությունները տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառելու հարցում որևէ սահմանափակում չունեն: Ըստ «ՀՀ կրթության մինչև 2030

թ. զարգացման պետական ծրագրում», կրթության զարգացման գերակայությունները և գործողությունների շրջանակը ներառում է օժանդակություն նորարարական, այլընտրանքային, կրթության գերազանցության և փորձարարական կրթական ծրագրերի մշակմանը, ներդրմանը և իրականացմանը, հեռավար կրթական ծառայությունների, էլեկտրոնային բաց պաշարների, առցանց դասընթացների ներդրում, այդ թվում՝ գլոբալական և սահմանամերձ համայնքների համար և ուսումնական հաստատությունների ուսումնական գույքի, ժամանակակից համակարգչային սարքավորումների շարունակական արդիականացում, համացանցի որակյալ հասանելիության ապահովում, ժամանակակից լաբորատորիաների, մարզադահլիճների և գրադարանների ստեղծում, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնում, տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կրթական ծրագրերի բարելավում, առկա լավագույն փորձի ընդլայնում և զարգացում և այլն [4, էջ 31]: Այսինքն՝ գործող օրենսդրությունն ընդամենն օժանդակում է կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ակտիվացմանը և կրթության տեղեկատվայնացման մակարդակի բարձրացմանը:

Ներկայումս XX դարի արդյունաբերական հասարակությունից անցում է կատարվում XXI դարի գիտելիքի հասարակություն: Գիտելիքահենք հասարակության ձևավորման համար, որը գիտելիքահենք տնտեսության միջավայրն է, բարձրագույն կրթությամբ տնտեսապես ակտիվ բնակչությունը պետք է կազմի շուրջ 60%: Կրթության զարգացումը պայմանավորված է հասարակության գործունեության բոլոր գործոններով և պայմաններով. տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային և այլն:

Այսպիսով, կրթությունը մրցակցային և կայուն զարգացման հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ է, որ հայկական կրթական համակարգն ինտեգրվի և ճանաչվի միջազգային հարթակներում:

Օգտագործված աղբյուրների ցանկ

1. ՀՀ սահմանադրություն, Եր., 2015
2. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», ՀՀ օրենքը, Ընդունված է 2004 թ. դեկտեմբերի 14-ին
3. «Կրթության մասին» ՀՀ օրենքը, Ընդունված է 1999 թ. ապրիլի 14-ին
4. «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/4013/about>

5. ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների նազմավարություն և երկարաժամկետ զարգացման ծրագիր, Եր., 2018
6. **Аветисян, М. Б.** Сравнительный анализ управления системами высшего образования Германии и Испании / М. Б. Аветисян // Вісник Черкаського університету. – 2018. Вип. № 5. – С. 3-7.
7. **Грибина, Г. А.** Государственное регулирование в сфере высшего образование / Г. А. Грибина, Е. Л. Ермолаева, Е. С. Илюшина, М. Е. Кокарева, Л. А. Федосеева // Современные научные исследования и разработки. – 2019. – №1(30). –С. 314-316. https://www.elibrary.ru/download/elibrary_37113110_56243874.pdf, (Дата обращения: 15.12.2022)
8. **Засыпкин, В. П.** Модели государственного управления образованием: анализ зарубежного опыта // Научные проблемы гуманитарных исследований. – 2008. – № 10. – С. 82-91.
9. **Ковалева, Е. Н.** Иерархия и регионализация образовательных услуг: опыт Германии // Человеческий капитал и профессиональное образование. 2017, № 3(23). С. 56-61.
10. **Кошелева, Е. Г.** Государственное регулирование системы образования: теорико-концептуальный подход, Образование и проблемы развития общества, №4 (17), 2021, С. 67-74, <https://cyberleninka.ru/article/n/gosudarstvennoe-regulirovanie-sistemy-obrazovaniya-teoretiko-kontseptualnyu-podhod>, (Дата обращения: 20.12.2022)
11. **Мамедов, А. А.** Государственное регулирование в сфере высшего образования // Вестник РУДН. 2011. № 2, С. 29-39, <https://cyberleninka.ru/article/n/gosudarstvennoe-regulirovanie-v-sfere-vysshego-obrazovaniya>, (Дата обращения: 20.12.2022)

Сдана/Հանձնվել է՝ 10.02.2023

Рецензирована/Գրախոսվել է՝ 16.02.2023

Принята/Ընդունվել է՝ 19.02.2023